

# ԱԷՏԱՐԷՐ



«ԹՈՂ ՏՈՒՔԻ ՄԱՆԻ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆՏԻ ԳԱՆ» ԳՈՒԿ. ԺԸ. 46.


ՀԱՏՈՐ Թ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՆՈՅՆԲԵՐ 1, 1880

ԹԻԻ 11

ԽՈՒՉԱՐԿՈՒԹԻՒՆ  
ԿԵՐՐՈՂԱԿԱՆ ԱՓՐԻԿԷ

Չարմանալի է որ բոլոր արևմտեան կիսադունտը որ 1492ին սկսաւ ճանչցուիլ՝ շատով ծայրէ ի ծայր խաղաւեցաւ և անոր աշխարհագրական տախտակները գծուեցան, մինչ կեդրոնական Ափրիկէի մեծ մասը մինչև շատ մտաժամանակ մնաց անձանօթ։ Երկրիս այս ընդարձակ մասին վերայ ստոյգ տեղեկութիւններ ստանալու աշխատողներուն մէջ առաջին տեղին ունի Մր. Լիւինկոզոն, Սկոտլանդի միսիոնարը։ Այս անձը, 1854 էն մինչև 1856, հարաւային Ափրիկէէ ճամբայ ելլելով, գնաց նախ դէպ ի հիւսիս և ապա դէպ արևմուտք մինչև Անկոլա, Ալանդեան ովկիանոսին եզերքը, հասարակածէն իբր 10 աստիճան դէպ ի հարաւ։ Յետոյ գնաց Անգոլա, և 1866 ին գառնալով Ափրիկէ միասնագամ սկսաւ իւր խաղաղութիւնները։ Երբեմն երբեմն պատեհութիւն կը գտնէր նամակ ղրկել իւր բարեկամներուն Անգոլիա։ Անոր սրտին փափաքն էր առևտրոյ և ֆրիտանեական ազդեցութեան ճամբայ բանալ դէպ ի կեդրոնական Ափրիկէ. այսպէս կը յուսար նաև նպաստել



որանք անցուց անոր հետ, և ապա թողով զնա յառաջ տասնէլ իւր խաղաղութիւններն, ինք դարձաւ Անգոլիա և Ամերիկա՝ իրեն հետ առնելով Մր. Լիւինկոզոնի թուղթերը զորոս Լիւինկոզոն իւր երկար ճամբորդութիւններուն մէջ գրած էր այն երկրին վրայ։ 1873 ին մեռաւ Մր. Լիւինկոզոն, և անոր հաւատարիմ սպասաորներէն ոմանք պահելով անոր մարմինը բերին մինչև ծովեզերք և անկէ մարմինը տարուեցաւ Անգոլիա, և թաղուեցաւ մեծ պատուով Վէստմինսթերի եկեղեցին ուր է Անգոլիոյ թագաւորաց, երևելի պատմագրաց, զօրապետաց և բանաստեղծից դերեղմանը։

1874ին Մր. Սդանլի դարձեալ գնաց և շրջեցաւ կեդրոնական Ափրիկէ։ Չանդիպարէ որ Ափրիկէի արևելեան ծովեզեր վրայ է՝ ճամբայ ելլելով առաւ իրեն հետ բնիկներէն

իւր խաղաղութիւնները։ Երբեմն երբեմն պատեհութիւն կը գտնէր նամակ ղրկել իւր բարեկամներուն Անգոլիա։ Անոր սրտին փափաքն էր առևտրոյ և ֆրիտանեական ազդեցութեան ճամբայ բանալ դէպ ի կեդրոնական Ափրիկէ. այսպէս կը յուսար նաև նպաստել

տել գերեվաճառութեան բարձման այն երկրէն։ Ժամանակ մը ամենեկին նամակ չառին անկէ բարեկամները, և մեռած կը կարծէին զնա։ 1871ին Մր. Սդանլի, Ամերիկացի անվեհեր երիտասարդը, գնաց ի խնդիր Մր. Լիւինկոզոնի։ Գտաւ զնա, և շատ ա-

շատ մարդ իբր սպասաւոր և օգնական, և նախ գնաց այն տեղերը զորոս արդէն խաղաղած էր Լիւինկոզոն։ Այն երկիրը ոչ թէ լեռնային է, ինչպէս կը կարծուէր առաջ, այլ դաշտային, և ունի մեծամեծ ծովափներ, որոց մէկէն կը բղկէ Նեղոս գետ։ Մո-

վահները և գետերը խուզարկելու համար Մր. Սգանյի իրեն հետ տարած էր թեթև նաւակներ, նաև Անդղիա շինուած նաւ մը որոյ նմանութիւնը կայ մեր վարի պատկերին մէջ :

Այս նաւն այնպէս շինուած էր որ կրնար բաժնուիլ հինգ կտոր դիւրաւ տարուելու համար, ինչպէս կը տեսնուի պատկերին վարի կողմը. բայց երբ կարենին իրարու կը կցուէին, նաւը կ'ըլլար պատրաստ, ինչպէս կը տեսնուի պատկերին վերի կողմը :

Սգանյի իրեն հետ ունենալով այս նաւակներն, անցաւ ցամաքով մեծ ծովահներուն երկրէն դէպ արևմուտք, և հոն մեծ գետի մը վերի մասէն մը տաւ իւր ուղեկիցներով նաւակները, և ամիսներով նաւարկելով 1877ի օ-

գոստոսին հասաւ Գանկոյ գետին բերանը որ Ազլանդեան օվկիանոսի եզերքն է : Այս ճանապարհորդութեան դժուարութիւնները շատ և խիստ էին : Շատ տեղ գետը ջրվէժներ ունէր, և հարկ էր դուրս ելլել, և նաւակները և իրենց բոլոր կարասին և պաշարները տանել ցամաքէն՝ ճամբոյ բանալով խիտ անտառներու մէջէն : Մեր առաջին էջին պատկերը կը ցուցնէ թէ Սգանյի մարդիկն ինչպէս ճամբայ կը բանային անտառներուն մէջ : Սգանյի կը հանդիպէր երբեմն վայրենի ցեղերու որոց դէմ կը ստիպուէր կռուիլ : Նաև հիւանդութիւններէ մեռան անոր մարդոց շատերն, այնպէս որ 224 հոգիէն 89 միայն ետ դարձան ողջ Զանգիպար Սգանյիի հետ : Երեքամեայ ճամբորդութեան նեղութիւններէն Սգանյիի մտղերը որ սև էին՝ եղան սպիտակ : Բայց Լեւինկոզոնի, Սգանյիի և այլոց տաժաւները խուզարկութիւններուն արդիւնքը սա եղաւ, որ այն երկիրն հիմա ծանօթ է : Անդղիայէն և Ամբրիկայէն միտրոսներ կ'երթան հոն, Քրիստոնէութիւն և Քրիստոնէական դաստիարակութիւն և քաղաքակրթութիւն ստրկեցնելու Ամբրիկէի վայրենի ցեղերուն, որոց շատերը մարդակեր են, և յաճախ կռուելով իրարու հետ, իրենց գերիները կը վաճառեն իբրև սարուկ : Կը յուսանք թէ շատ ժամանակ չանցի որ այն խաւարին երկիրը կը պայծառանայ «Արգարութեան Արեգական» օրհնեալ լուսովը :

ՃՇՄԱՐԻՏ ԶԱՐԳ


«Եթէ զոյգ մը ոսկիէ ապարանջան ունենայի», ըսաւ ինծի ծանօթ փոքրիկ աղջիկ մը, « շատ երջանիկ կ'ըլլայի. մինչև որ այս ապարանջանն ունենամ, պիտի մնամ տխուր : »

Արդարև զոյգ մը ոսկիէ ապարանջան շատ գեղեցիկ զարդ է, ուստի զարմանք չէ որ այս աղջիկը կը փափաքէր այսպիսի զարդու մը տէր ըլլալ : Այն միայն ապարանջան, այլև ուրիշ ոսկի կամ ականակապ զարդեր ունենալու փափաքել պարստելի չէ :

Սակայն այս փոքրիկ աղջիկը շատ կը սխալըր կարծելով թէ իւր երջանկութիւնն այնպիսի զարդէ կախեալ էր : Շատ մարդ կրնայ ապարանջան, մանեակ, գինդ, մատանի ունենայ, և

դերձներով : » Եթէ վայր մը խորհիք, պիտի տեսնէք որ այսպէս է : Եթէ Քրիստոնեայ էք, երջանիկ էք և ձեր անձին մէջ է ձեր երջանկութիւնը : Ճշմարիտ երջանկութիւնը կու գայ ներքուստ : Հեզ և հանդարտ հոգին կը բերէ բուն երջանկութիւն զոր աշխարհիս պատուականագոյն զարդերը չեն կարող տալ : Արդ, ականակապ զարդեր չեն կրնար զուարթացնել սիրաը, և ոչ կրնան խիղճը հանդարտեցնել : Անոնք թերևս գեղեցիկ և մեծագին են, բայց նիթական բաներ են, մարդուս անձէն դուրս : Հեզ և հանդարտ ոգին, այն ոգին որ կը սիրէ զԱստուած և կը հաւատայ անոր, եթէ ունիք զայն, ձեր անձին մասն է, դուք էք զխոյզին, ուստի և հարկաւ կ'ընէ զձեզ երջանիկ :

Գարձեալ, հեզ և հանդարտ ոգին սիրելի կ'ընէ զձեզ ուրիշներուն, և աւելի պատուական յաչս մարդկան քան զամենայն զարդ : Ի՞նչ կ'ուզէք որ ըսուի մանաւանդ ձեր վրայ, « Մարիամ զոյգ մը գեղեցիկ ապարանջան ունի », թէ « Մարիամ ի՞նչ բարի աղջիկ է. կարծեմ ճշմարիտ Քրիստոնեայ է : » Եթէ խելացի և առաքինի էք, զիսեմ ինչ պիտի պատասխանէք հարցմանս : Լաւագոյն է սիրելի ըլլալ մարդոց քան նախանձելի : Լաւագոյն է



ըլլալ երջանիկ : Այսպիսի զարդեր կրնան բաւական ուրախութիւն տալ պճնասիրի մը, բայց ճշմարիտ երջանկութիւնը շատ տարբեր է այս ուրախութենէն :

Կայ բան մը որ քան որեւիցէ զարդ ոսկի և ականակապ պատուական է, և զայն ունեցողը բոլոր բարեկամաց աչքն իրեն կը դարձունէ, և որ մեծն է՝ նոյն իսկ Աստուծոյ աչքը : Այս է «հեզ և հանդարտ հոգիին զարդը» : Այսպիսի հոգի ունեցող մարդուն մէջ կը բնակի Քրիստոս : Հեզ և հանդարտ հոգին չինչանակեր լոկ քաղցրութիւն և զուարթութիւն, այլ կատարեալ Քրիստոնէական վարք :

Աստուած իւր օրհնեալ խօսքին մէջ կ'ըսէ թէ աղնուագոյն զարդ զոր կրնայ երբէք ունենալ մարդ, Քրիստոնէական վարքն է, և լու է այս զարդով զարդարուիլ քան «ոսկիով կամ մարդարիաներով կամ մեծածախ հան-

և յոյժ լաւագոյն է մարդուս իւր հոգին զարդարել քան իւր մարմինը :

Հեզ և հանդարտ հոգին քան ուրիշ որեւիցէ զարդ ունի նաև սա առաւելութիւնը, որ ամէն մարդ կրնայ ստանալ զայն : Վերոյիշեալ աղջիկը, որոյ համար ըսի թէ զոյգ մը ապարանջան ունենալ կը փափաքէր, չէր կրնար համիլ իւր փափաքանաց, վասն զի հայրը հարուստ չէր : Բայց որեւիցէ ոք կրնայ աշխարհիս այն պատուականագոյն զարդը, հեզ և հանդարտ ոգին ստանալ առանց ստուսկի և առանց գնոյ : Ամէն փոքրիկ աղջիկ կրնայ տէր ըլլալ այս սքանչելի զարդուն, այս մեծագին մարդարտին, որ կ'ընէ զնա ցանկալի այս աշխարհիս վրայ, և կամաց կամաց մուտ կը պատրաստէ անոր յերկինս :

ԱՇԽԱՐՀԱՅՈՅՑ ՏԱԽՏԱԿ ԾԻՆԵԼ

Մեր ընթերցողները գիտեն թէ ի՞նչ են աշխարհացոյց տախտակք , բայց միթէ գիտեն նաև թէ ի՞նչպէս կը շինուին այսպիսի տախտակներ :

Այս պատկերին մէջ կը տեսնէք բարձր քարի մը վրայ երկու մարդ որ պատրաստութիւն կը տեսնեն շրջակայ երկրին տախտակը հանելու : Երկրի մը տախտակը շինելու համար պէտք է նախ տեղեկութիւն ունենալ լեռանց և գետոց և անոնց հեռաւորութեանն իրարմէ , եւն : Այս հեռաւորութիւնը չափելու երկու կերպ կայ : Առաջինն է չորս կամ հինգ կանգուն երկայն ձողով մը չափել միջոցը որ ի մէջ երկու տեղեկաց : Բայց այս կերպը շատ դժուարին և ծանր է , նաև շատ թեւրի : Երբեմն կը հանդիպին խոր ձորեր կամ բարձր լեռներ ճամբուն վրայ , և են մեծ արդեւք : Երկրորդ կերպն աւելի գիւրին է և սխալմանէ ազատ : Այս կերպը հասկնալու համար պէտք է քիչ մը տեղեկութիւն ունենալ երանկանց : Գիտէք որ երեք ուղիղ կողմ ունեցող ձև երանկան կը կոչուի : Ամէն եռանկիւն ունի երեք կողմ և երեք անկիւն : Անկիւն կ'ըսուի ծայրն ուր երկու կողմանք կու գան կը կցին իրարու : Արդ , եթէ չափազեա մը գիտէ այս վեց բաներէն , այսինքն երեք կողմերէն և երեք անկիւններէն , երեքը , որոց մին բլլալու է եռանկեան մէկ կողմը , կրնայ միւս երեքը գտնել : Աշխարհացոյց տախտակ գծողներն այս սկզբունքը գործածելով կրնան գտնել երկու կէտերու կամ տեղերու հեռաւորութիւնն իրարմէ : Գիտենք թէ որչափ հարկաւոր է նաւապետի մը ունենալ ճիշդ տախտակը ծովեզերաց առ որով կը նաւարկէ , որպէս զի անվտանգ տանի նաւը : Որպէս զի նաւապետը ունենան այսպիսի տախտակներ , կառավարութիւնը մարդ կը զրկեն զննել ինսամով ծովեզերքը , այսինքն չափել և նշանակել զլրոց , կղզեաց և ծանծաղրւաններուն հեռաւորութիւնը : Այս մարդիկը նախ հարթ գետին մը կ'ընտրեն , և անոր վրայ իրարմէ իրր երեք կամ չորս մղոն հեռու երկու ցից կը անկեն : Այս ցիցերուն իւրաքանչիւրին ծայրը կայ անաղեայ դնտակ մը որ արեգական ճառագայթներէն փայլելով կրնայ շատ հեռուէն տեսնուի : Այս ցիցերուն մէջտեղի միջոցը կը չափուի ձողով կամ կանգնով , և չափելը կը կրկնուի քանի մ'անգամ և մեծ զգուշութեամբ մինչև որ ճշդիւ կը գիտցուի չափը :

Յետոյ չափողը կը գործածէ հեռաչափ կոչուած գործիքը որ այս պատկերին մէջ կը տեսնուի , և կը բաղկանայ եռանկան վրայ հաստատուած դիտակէ մը և անկիւնաչափէ մը : Չափողը կը անկէ այս գործիքը ցցէ ի ցից չափուած գծին մէկ ծայրը , և կը նայի բլրոց կամ լեռան մը վրայ գտնուած առարկայի մը , գործիքնակ ծառի մը , և կը գիտէ որ , եթէ ծառէն գիծ մը քաշուէր մինչև ցիցը , ինչ անկիւն կը կազմէր չափուած գծին հետ : Յետոյ վերոյիշեալ գործիքը կը ամանի չափուած գծին միւս ծայրը , և նայելով



նոյն ծառին՝ կը գտնէ անկիւնը զոր կը կազմէ ծառին ուղղութիւնը չափուած գծին այն ծայրին հետ : Այսպէս չափողը կ'ունենայ ինչ որ կը բաղձար ունենալ գիտնալու համար ծառին հեռաւորութիւնը չափուած գծին երկու ծայրերէն : Չափուած գիծն է եռանկեան կողմերէն մին , և չափողը գիտէ զայն . գիտէ նաև երկու անկիւնները զորս կը կազմէ ծառին ուղղութիւնը չափուած գծին երկու ծայրերուն հետ , ուստի և կրնայ ճշդիւ հաշուել հեռաւորութիւնը չափուած գծէն մինչև ծառը : Այս գոր-

ծողութենէն ետքը , եթէ չափողը կ'ուզէ ուրիշ առարկայի մը հեռաւորութիւնը որոշել , գործիքը կը դնէ ծանուցեալ եռանկեան քովերէն մէկուն ծայրը , և գիտակով կը նայի այն առարկային , և կը գտնէ անկիւնը զոր առարկային ուղղութեան գիծը կը կազմէ այն գծին հետ որուն չափը գիտցուած է : Յետոյ գործիքը կը ամանի չափը գիտցուած գծին միւս ծայրն , և անկիւնը չափելով կ'իմանայ հեռաւորութիւնը որ կայ առարկային և այն կէտին մէջտեղ ուր հիմա կը գտնուի գործիքը : Այսպէս յառաջ երթալով կրնայ զբա-

նել հեռաւոր բլրոց և լեռանց հեռաւորութիւններն իրարմէ , առանց ուրիշ դիմ մը ձողով կամ կանգնով չափելու :

Ընթերցողներէն շատերն հիմա դպրոց կ'երթան , ՉԵ՞ն բաղձար սորվել վերոյիշեալ գործիքը գործածել և տեղէ տեղ հեռաւորութիւնները գտնել առանց ձող կամ կանգուն գործածելու : Նախ +աջ սորվելու են աշխարհագրութիւնը և թուաբանութիւնը , և ապա , եթէ պատեստութիւն ունենան , կըրնան գիւրաւ սորվել նաև այն ուսմանքը որ հարկաւոր են չափելու երկրիս հեռաւորութիւնը լուսնէն , արեգակէն և մարտիկներէն :

ՓՈՔՐԻԿ ՎԱՅՑ ՄԸ

Տղայք , մտտերս անգամ մը ձեզի ծնողաց հնազանդ բլլալու վրայ խօսելով , կարդաւ անուն ազու մը պատմութիւնն ըրի : Կը յուսամ թէ այն պատմութիւնը ուշագրութեամբ կարդալով , օգուտ քաղեցիք անկէ : Այս անգամ կ'ուզեմ խօսիլ ձեզի փոքրիկ աղջկան մը վրայ որ Էմիլի կը կոչուի , և կը յորդորեմ ձեզ այս փոքրիկ աղջկան նմանիլ :

Էմիլի որ Ամերիկացի աղջիկ է ինը տարեկան՝ անգամ մը ոստիկանութեան դուռը կանչուեցաւ իւր հօրը տան մէջ գործուած ծանր յանցանքի մը վրայ վկայութիւն տալու : Յանցաւորին փաստաբանը հարցոց Էմիլիի , « Գիտե՞ս ի՞նչ է երդում , և ի՞նչ են երդում ընելուն պայմանները » : « Չեմ հասկնար ինչ ըսել կ'ուզես » , ըսաւ Էմիլի : Ասոր վրայ փաստաբանը դառնալով դատաւորին ըսաւ . « Ահա , իմ առարկութեանս ի՞նչ տւելի մեծ ա-


պացոյց կրնայ ըլլալ քան զայս. այս աղջկան վկայութիւնը չի կրնար ընդունուիլ, քանզի աղջիկը երգում է՝ ներս պայմանները չի գիտեր:

«Տեսնենք այնպէ՞ն է», ըսաւ դատաւորը, և էմիլին քովը կանչեց: Աղջիկը գնաց դատաւորին քով, և դատաւորն հարցոյց անոր. «Աղջիկս, դուն երբէք երգում ըրած ես»: Էմիլի կարծելով թէ Աստուծոյ անունը ունայն բերան աններս վրայ կը հարցունէր դատաւորը, «Ոչ, տէր», ըսաւ, «ես Աստուծոյ անունը բերան առած չեմ ունայն»: Դատաւորը տեսնելով որ աղան սխալ հասկցաւ իւր հարցումը, ըսաւ. «Աղջիկս, դուն երբէք վկայութիւն տալու դացած ես»: «Ոչ, տէր», ըսաւ, «երբէք այս տունը եկած չեի»: Դատաւորը բաց Սուրբ գիրք մը տալով աղջկուն ձեռքը, «Աղջիկս», ըսաւ, «այս գիրքը գիտե՞ս»: Էմիլի գիրքին վրայ նայելով ըսաւ, «Գիտեմ, այս գիրքն Աստուածաշունչ է»: «Գիտե՞ն ի՞նչ ըսել է Աստուածաշունչ», հարցոյց նորէն դատաւորը: «Այո», պատասխանեց Էմիլի, «գիտեմ որ Աստուածաշունչն Աստուծոյ խօսքն է»: Ասոր վրայ Էմիլիին պատուիրուեցաւ ձեռքը Աստուածաշունչին վրայ գնելով ուշադրութեամբ մտիկ ընել ինչ որ պիտի ըսէր դատաւորը: Դատաւորը վիաներուն սովորական երգման ձևն ըսելէն ետքը, Էմիլիին դառնալով ըսաւ, «Աղջիկս, դուն հիմա իբրև վկայ երգում ըրիր, ուստի էթէ շիտակ չես խօսիր, գիտե՞ն ի՞նչ պիտի ըլլայ քեզի»: «Եթէ շիտակ չխօսիմ», ըսաւ Էմիլի, «դուրս պիտի մնամ արքայութենէ»: «Ուստի՞ գիտես դայս», հարցոյց դատաւորը: Աղջիկը Սուրբ գիրքն աններով բացաւ այն տեղն ուր գրուած է. «Գուրդը րացիիդ գէմ՝ սուս վկայութիւն մի ըներ»: և այն խօսքը կարդալէն ետքը ըսաւ, «Ես կարդալ սորվելէ առաջ այս խօսքը գիտէի»: «Աղջիկս», ըսաւ դատաւորը, «քեզի խրատ տուող մը եղա՞ն որ այնպէս կամ այնպէս վկայութիւն տաս այս մարդուն գէմ՝ որ գիտացդ կեցած է»: Էմիլի այս հարցման սա պատասխանը տուաւ: «Երէկ իրիկուն մայրս գիս իւր սննեակը կանչելով կարգաց տասը պատուիրանները, և առաջարկեց ինձի ծնկան վրայ գալով խնդրել Աստուծմէ շնորհք հասկնալու համար թէ ո՞րչափ ատելի է անոր սուս վկայութիւն ընել ուրիշին գէմ, և ընդհակառակն ո՞րչափ սիրելի է անոր շիտակ խօսիլ: Նաև երբ հօրս հետ հոս պիտի գայի, մայրս

գիս համբուրելով խրատեց որ իննբարդ պատուիրանը չմոռնամ, և գիտնալով թէ ինչ որ կ'ըսեմ Աստուած կը լսէ, այնպէս խօսիմ»: Աղջկան այս խօսքին վրայ դատաւորին աչուքները լցան, և դողդոջուն շրթամբ ըսաւ, «Աստուած օրհնէ քեզ, աղջիկս»: Ասոր վրայ Էմիլի աղայական պարզութեամբ ըսաւ ինչ որ գիտէր, այնպէս որ բոլոր լսողները համոզուեցան թէ շիտակ խօսեցաւ աղջիկը: Յանցաւորին բոլոր առարկութիւնները և սուտերն այս աղջկան վկայութեան առջև իբրև մղեղ ցրուեցան:

Սիրելի աղայք, կ'օգէ՞ք Էմիլիի օրինակին հետեի: Գիտե՞ք որ միշտ շիտակ խօսելով թէ՛ Աստուծոյ և թէ՛ մարդոց առջև գովելի գործ ըրած կ'ըլլաք:

ԳՐԻԳՈՐ Յ. ՊԱՍՄԱՆՅԱՆ  
Մարտուան, հոկտ. 1, 1880



ՈՂՈՂՈՄԱՅ ԱՅՐԸ

Հրէաստանի լեռնային երկիրը, մանաւանդ այն մասը որ Մեռեալ ծովուն արևմտեան կողմն է, ունի շատ այրեր և խորոշներ, բայց և ոչ մին այնպէս քաջ ճանչցուած է ինչպէս Ողողոմայ այրը (Ս. Թագ. Ի. Բ. 1), ուր ժամանակաւ պատասանեցաւ Գառիթ իւր մարդերով, մինչ հալածական կը շրջէր Սաւուդի երեսէն: Այս պատկերը կը ցուցնէ այրին ներսը միայն, ոչ թէ անոր մուտքը կամ հոն տանող վտանգաւոր անցքը: Այս անցքն այնպէս նեղ է որ հալու երկու մարդ կրնան քովէ քով երթալ: Մէկ դին խոր վիճ

է, և միւս դիէն բարձր ապառաժներ կը կարկառին ճամբուն վրայ: Նաև մուտքը շատ նեղ է, և ներս մանողը պարտի ծռելով և խարխափելով երթալ բաւական տեղ: Յետոյ կու գայ այն լայն սենեակը որ կը տեսնուի պատկերին մէջ և է խոնար և բարբո՛վին մութ: Շատ ապահով ապաստանարան է այս այրը, քանզի երկու կամ երեք քաջ մարդ կրնան պաշտպանել զայն թշնամեաց բազմութեան դէմ:

Թերևս Գառիթ գտած էր այս այրը երբ իւր հօրը ոչխարները կ'արածէր ի պատանեկութեան, և երբ հալածական կը շրջէր Սաւուդի երեսէն: Հոն ապախնայաւ Գառիթ, և բնակութեան տեղ ըրաւ զայն: Գառիթ անտարակոյս Հրէաստանի մէջ այս և ասոր նման բնական ամրութեանց քաջ տեղեակ էր, և այս է պատճառ որ սողմաններուն մէջ զորս յետոյ յօրինեց՝ ստէպ կ'անուանէ զԱստուած Վե՛մ, Գառիթն և Կառնէն: Տես Սաղմ. ԺԼ. 2, 31:

ԱՌԾՆՈՂՍ, ՎԱՐԺԱՊԵՏՍ ԵՒ ԱՌԱՅԼՍ

Այս տարին, 1880, կը մտանայ իւր վախճանին, ուստի կ'օգնեք քանի մը խօսք ըսել մեր 1881ի թերթին համար: Տղայոց Աւետարները երեք է. մին՝ Հայերէն, երկրորդը՝ Հայերէն գրով Թուրքերէն, և երրորդը՝ Յունարէն գրով Թուրքերէն: Այս երեք թերթերուն համար ունինք 1,250 բաժանորդ միայն: Տղայոց համար կայ ուրիշ թերթ մը Զուրկոյ առան Պուլկարերէն, զոր կը հրատարակէ Տող. Պայինկիճըն: Զունիցա գրեթէ նոյն նիւթը և նոյն պատկերներն ունի, բայց անոր բաժանորդներն 2,500 են: Այս թերթին այսպիսի տարածուելուն մէջ պատճառն այս է, որ Պուլկարիոյ մէջ վարժապետը կ'աշխատին բաժանորդ գանել իրենց աշակերաններէն: Այս ամբողջ տղայոց Աւետարներէն աւելի օրինակ տպեցինք ձրի զրկելու համար այլևայլ տեղեր, յուսալով թէ ծնողք, վարժապետք և այլք առներով այս օրինակներէն կը յորդորուին օգնել թերթին աւելի տարածմանը, գրուելով բաժանորդ և ուրիշներն յորդորելով գրուիլ:

Ամերիկայի Մեխիկոյոյ ընկերութեան կողմէն  
Իմպադիթ ձ. Բ. Կրիկ  
Ֆիլադելֆիայ եօգուշու, Ամերիկայ իսան  
**ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ**  
ՏՊԱՌՈՒԹԻՒՆ Ա. ՏԱՊՈՐ ՊՈՅՆՅԱՆ